

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԸ Թէ՞ ԷՇՄԻԱՇԻՆԸ *)

Դառնանք այժմ Թիֆլիսի Յանձնաժողովի բացատրութեանը։ Այստեղ ասլած է, «Յանձնաժողովս սրբազան պարտք է համարում շեշտել և ընդգծել այն ևս, որ մինչ այդ ժամանակ (այսինքն ապրիլի 23-ը, երբ նա գրավոր դիմեց Վեհ, Կաթողիկոսին՝ նրա հովանավորութիւնը խնդրելու) ոչ մի տեղեկութիւն իսկ չունէր Էջմիածնում յետազայում մարմին առած Յօրել։ Յանձնախմբի մասին եվ յիշավի, եթէ այդ կազմված Յանձնախմբի մասին մենք լսած լինէինք, առ նվազն միամտութիւն չեր լինի արդեօք մեր կողմից դիմել Վեհափառ Հայրապետին և խնդրել իր բարձր հովանավորութիւնը՝ Մենք, պարզ է, որ ոչ մի լուր չունէինք։ Կասկածու մարդիկ կարող են սակայն թերահավատել Թիֆլիսի Յանձնաժողովի այս յայտարարութեան անկեղծութեան և կարող են ենթադրել, թէ Էջմիածնում, ճեմարանի մանկավարժ, ժողովում, ամիսներով քննվող ու մշակվող հարցի մասին եթէ ոչ Յանձնաժողովը պաշտօնապէս, զոնէ նրա անդամներից մի քանիսը կարող էին մասնավոր տեղեկութիւն ունենալ և հավանօրէն ունէին, և Էջմիածնի, իրեւ կօնկուրենտի, նախաձեռնութիւնը խափանելու համար՝ Յանձնաժողովը մտածեց Վեհ։ Հայրապետի հովանավորութիւնը խնդրելու, որպէսզի իր գիրքն ամրապնդէ և իր գոյութեանը պաշտօնական, համազգային բնավորութիւն տայ, որով

էջմիածնի նախաձեռնութիւնն ու գործունէութիւնը ինքն ըստ ինքեան ի չիք կը դառնային։ Կասկածու մարդիկ կարող են դարձեալ ենթադրել, որ նոյն Էջմիածնի նախաձեռնութեան հետ մրցելու նպատակով է եղել, որ Թիֆլիսի Յանձնաժողովը իր մարտի 17-ի նիստում յանկարծ որոշել է, հակառակ իր ունեցած լիազօրութեան, տանել նաև Հայոց տաւերի գիւտի... անզուգական յօրելեանը։

Թէ որքան կասկածու մարդկանց այսպիսի ենթադրութիւնները հիմնավոր կամ անհիմն են՝ այս չեմ քննում։ Ես ընդունում եմ Յանձնաժողովի վերոյիշեալ յայտարարութիւնը՝ ինչպէս որ կայ և նրա վրա հմ հիմնում իմ ասելիքս։

Այդ յայտարարութիւնից պարզ երևում է, որ Թիֆլիսի Յանձնաժողովը եթէ զիտենար Էջմիածնի Յանձնախմբի գոյութիւնը՝ չեր դիմի Վեհ։ Հայրապետի հովանավորութիւնը խնդրելու, որովհետև նա չեր կարող խնդրել Վեհ, Կաթողիկոսից, որ իր ապրիլի 25-ից տված կօնդակը ոչնչացնէ (որով Էջմիածնում ընտրված էր Կենտրօն, Յանձնախումբ) ի շնորհս Թիֆլիսի Յանձնաժողովի։ Չեր կարող նաև խնդրել, որ Վեհափառը՝ Էջմիածնի Կենտրօն, Յանձնախումբը պահելով հանդերձ՝ հովանավորէ և իրան, Թիֆլիսի Յանձնաժողովին, որով մինենյն յօրելեանի համար երկու համազգային տօնախմբութիւն սահմանէ, մէկը միւսից 46 օր հեռավորութեամբ Ուրեմն, նոյնիսկ Թիֆլիսի Յանձնաժողովի խոստովանութեամբ, Էջմիածնում, Վեհ։ Հայրապետի կօնդակով Կենտրօնական Յանձնախումբ նշանակվելուց յետոյ, այլևս չեր կարող խօսք լինել մի

ուրիշ՝ համազգային պաշտօնական բնավորութիւն կրող Յանձնաժողովի մասին:

Թիֆլիսի Յանձնաժողովը ապրիլի 23-ի դիմումն անելիս դեռ չը գիտէր, որ էջմիածնում կազմվում է Կենտր. Յանձնախումբ, էջմիածնում էլ ապրիլի 25-ի կօնդակը հրատարակվելիս, նոյնպէս չը գիտէին, թէ Թիֆլիսի Յանձնաժողովը դիմելու է Վեհափառի հովանավորութիւնը խնդրելու էջմիածնի պատասխանը ուշանալիս՝ Թիֆլիսի Յանձնաժողովը, եղելութեանը դեռ անտեղեակ՝ կարող էր զարմանալ, թէ կուզ վիրավորքի պատասխանի ուշանալու կամ անուշադրութեան համար*):

Մինչև այստեղ՝ Թիֆլիսի Յանձնաժողովի գործողութիւնները, զգացած վիրավորանքն և այլն հասկանալի են: Բայց այն, ինչ որ Յանձնաժողովը իրան թոյլ է տվել անելյուսի 9-ի ՏԻՎ նիստում, միանդամայն անհասկանալի է և չէ կարող ուրիշ քան առաջացնել՝ եթէ ոչ խորին վիշտ և զայրորթ:

Յունիսի 9-ին, ինչպէս երեսում է այդ նիստի որոշումների երկրորդ կտտից, Յանձնաժողովը արդէն գիտէր, որ էջմիածնում կազմված է Վեհափառ Հայրապետի կօնդակով կենտրօնական Յանձնախումբ, որ էջմիածնում որոշված է յօրելեանը տօնել

* Հայր զիվանապետի պաշտօնական գրութիւնը մայիսի 16-ից՝ Յանձնաժողովը չէ հրատարակել և ոչ բովանդակութիւնը հաղորդէի: Բայց կասկածում եմ Յանձնաժողովի այն խօսքի վրա, թէ այդ գրութեան մէջ ուղ մի հնուափոր ակնարկ էլ չեն դտել Վեհափառից խնդրած բարձր հովանավորութեան մասին: Բազում վարդապետի հնուազիքը, որ Յանձնաժողովի կարծիքով քրոլը ուղիղին նրա խնդրին չէր համապատասխանում—այն ինչ նա բոլորովին համապատասխանում է—ցոյց է տալիս, որ պաշտօնական գրութիւնը իրազութիւնը բացատրած պէտք է լինի, այնպէս որ Յանձնաժողովը հասկանայ, որ իր խնդրիը չէ կարող կատարվել:

հոկտեմբերի 13-ին, և այս որոշումը ստացել է Նորին Վեհափառութեան հավանութիւնը և հաստատութիւնը:

Այս գիտենալուց յետոյ Թիֆլիսի Յանձնաժողովը՝ հիմնվելով հնաց իր խոստովանութեան վրա՝ չէր կարող չը հասկանալ, որ Վեհափառն էջմիածնի կենտր. Յանձնախումբը նշանակելուց յետոյ՝ չէր կարող միաժամանակ իր հովանավորութիւնը տալ մի ուրիշ Յանձնաժողովի: Արդ՝ երբ այս բաները Յանձնաժողովը յունիսի 9-ին գիտէր, ապա ինչպէս իրան թոյլ տվեց՝ ինքն իրան հակասելով և եղելութիւնը աղավաղելով՝ ասել, թէ ռայդպիսի վերաբերմունքը Միանգամայն անհասկանալի եւ անտրամաբանելի էր, հետեաբար էլ խիստ վիրավորականու: Երբ յունիսի 9-ին, Յանձնաժողովը համար արդէն պարզված էր էջմիածնում կատարված իրողութիւնը, ապա Յանձնաժողովը «միանգամայն հասկանալի ու տրամաբանական» պիտի գտնէր իր խնդրի մերժումը: Իսկ եթէ զիվանապետ և Բազրատ վարդապետը չէ կամեցել չոր մերժումը զրելով Յանձնաժողովին վիրավորանք հասցնել, այլ կողմնակի կերպով կամեցել է հասկացնել (ափսոսում եմ, որ նրա գրութիւնը չէ հրատարակված), այս գէպքում նա միայն շնորհակարութեան է արժանի իր փափկանկատութեան համար:

Յանձնաժողովը ունեցել է մի լաւ Շահնկութիւն՝ յօրելեանը համազգային դարձնելուած: Այս նպատակով նա ուղղվել է տպագրված «հրավերի» առաքումը մի քանի օրով ուշացնել և մի յատուկ գրութեամբ գիմել նորընակիր Հայրապետին և խնդրել, որ նա բարեհանի իր բարձր հովանավորութեան

ըսկ այդ ժողովն, մրաս թե յայտնի է, սասք զառ քահանայապես չունինք, այլ ընտրելու էինք: Ա. 8.

«զրկի պաշտօնավարութիւն» ըստրիու - ըստրվութիւննից» «առ նուազն է», մոնմատ-ը: Ա. 8.

տակ վերցնել Յօրել. Յանձնախումբս, ինչպէս և մեծ ու համազգային տօնի առիթով կազմակերպվելիք հանդէսները... որպէսզի Յանձնախումբս ուրավէրներին հակատին իսկ ավելացնէր «Վեհափառ Հայրապետի բարձր հովանափորութեան տակ» խոսքը և ապա ցրվէր նրանցու:

Այս որոշումով Յանձնախումբը խոստուգանում է, որ յօրելեանական տօնին համազգային կերպարանք տալու համար անհրաժեշտ է Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանափորութիւնը: Արդ՝ երբ այդ բարձր հովանափորութիւնը չնորհված է էջմիածնի Կենտրօնական Յանձնախումբին, համազգային տօն կազմակերպելու վիճակի մէջ է դրվում այդ Կենտրօնական Յանձնախումբը էջմիածնում, հետեապէս և ուրիշ տեղերում զոյութիւն ունեցող յանձնաժողովներ չեն կարող իբրև այդպիսի համազգային տօնի նախաձեռնողներ ճանաչվել ազգի կրօմից: Եվ քանի որ, դարձեալ Յանձնախումբով խոստովանութեամբ, ուհամազգային բուռն ցանկութիւն է յայտնվել, թէ պէտք է հայ տպագրութեան յօրելեանը տօնել, ամեն տեղ միաժամանակ - սրանցից տրամարանօքն հետևում է, որ եթէ թիֆլիսի Յանձնախումբովը արգար և անկնդ ցանկութիւն ունիր, որ տօնը համազգային լինի և ամեն տեղ տօնվի միաժամանակ, նա առանց այլ այլութեան պիտի ենթարկվէր Ամենայն Հայոց Կաթողիկոսից հաստատված և պաշտօնապէս յայտարարված: որոշմանը, տօնելու յօրելեանական տօները հոկտեմբերի 13-ին, ճանաշելով որ միայն և միայն Վեհափառ Հայրապետի ընդունած, հաստատած և առաջադրած յօրելեանական տօնն ունի հա-

մազգային նշանակութիւն:

Այս էր պահանջում առողջ գատողութիւնը, բայց Յանձնախումբովովը ըոլորովին ներհակ վարմունք է ցոյց տվել Նա յայտարարում է, որ չը նայելով էջմիածնում հոկտ. 13-ին կատարվելիք տօնին՝ այնու ամենայնիվ թիֆլիսում պէտք է կատարվի յօրելեան նոյեմբ. 25-26-ին:

Այս որոշումն անելիս ինչ էր մտածում Յանձնախումբը. արդիօք այն, որ էջմիածնը, գլուխ ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, պէտք է խոնարհվի թիֆլիսի՝ 53 ներկայացուցիչների ժողովից ընտրված Յանձնախումբի առաջ և խափանչ հայրապետական հաստատութիւն գտած և հրատարակված հոկտ. 13-ի տօնախմբութիւնը, որպէսզի թիֆլիսի Յանձնախումբով սահմանած նորմեր. յօրելեանը չը խանգարվի. կամ արգեօք այն, որ թէկուց էջմիածնը նշանակված համազգային տօնախմբութիւնը կատարէ, սակայն ինքը թիֆլիսի Յանձնախումբովը կատարէ յայտնի համազգային այս բուռն ցանկութեան, թէ պէտք է... յօրելեանը տօնել ամեն տեղ միաժամանակ, հերձված կազմելով յատուկ տօնախմբութիւն կը կատարէ էջմիածնի ջգրու. կամ արգեօք այն, որ երկու տօնախմբութիւններն էլ կատարվելիս՝ էջմիածնականը կը նսեմանայ, իսկ իր կազմակերպելիքը համազգային բնավորութիւն կը ստանայ, իր կողմը գրագելով հիմնարկութիւնները, զըպ-րոցները, եկեղեցները...

Խնձ թվում է, թէ այդ անխոնեմ ու սխալ որոշումը կայացնելիս թիֆլիսի Յանձնախումբովը զեկավարվել է կրքի և անձնական փառաւիրութեան դրդումներով և այս պատ-

ճառով անտես է արել համազգային տօնի՝
ամեն տեղ միաժամանակ, մի օրում տօնե-
լու ընդհանուր բուռն ցանկութիւնը և ազ-
գային բարոյական շահերը:

Ի՞նչ մօտիվներով է արդարացնում Յանձ-
նաժողովը իր հերձվածողական նոյեմբերի
տօնը: Առաջին մօտիվը մենք տեսանք,
Յանձնաժողովը խիստ վիրավորվել է էջ-
միածնի (կ սմ դիվանապետ հ. Բագրատ
վարդապետի) վերաբերմունքից, և տեսանք,
որ այս կլատում Յանձնաժողովը միանգա-
մայն անարդար է, իսկ էջմիածնի վերա-
բերմունքը միազնամայն հասկանալի ու
տրամաբան է:

Երկրորդ մօտիվն այն է, որ «էջմիածնի
կենտր. Յանձնաժողովի նշանակած հոկտ.
13-ը շատ կարճ ժամանակ էր նպատակա-
յարմար կերպով տօնելու համար համազ-
գային մեծ տօնը»:

Ընդունենք այս մօտիվը, բայց հէնց իր
ընդունած նոյեմբ. 25—26-ը միթէ բավա-
կան ժամանակ է մատակարարում «այդ հա-
մազգային մեծ տօնը նպատակայարմար
կերպով տօնելու», Ահա Յանձնաժողովի
խոստովանութիւնը այս հարցի նկատմամբ.
«Ճիշդն ասած՝ Յանձնախումբս այդքան ժա-
մանակն էլ (այսինքն մինչև նոյեմբ. 25-ը)
դեռ կարճ էր զտել հարկ եղած պատրաս-
տութիւնները տեսնելու, սակայն օրվայ
պատշաճութեան առաջ տեղի էր տվել»:

Իմ կարծիքով՝ ոչ հոկտեմբերի 13-ը և ոչ
նոյեմբ. 25-ը կարճ ժամանակամիջոց չեն
նպատակայարմար կերպով տօնելու յօրե-
լինական տօնը. բայց թէ հոկտ. 13-ը և
թէ նոյեմբ. 25-ը շատ կարճ են՝ իրագոր-
ծելու համար յօրնեանի առիթով՝ մտած-

ված ձեռնարկութիւնները, որոնց համար
ամբողջ տարիներ, գուցէ և տասնեակ տա-
րիներ են հարկավոր:

Օրինակ, հոկտեմբերի 13-ին ամենայն
հեշտութեամբ կարելի է պատգամավորներ
հրավիրել էջմիածնին աշխարհիս թէ-
կուզ ամենանեռավոր վայրերից. շատ լավ
կարելի է էջմիածնում գիտական նիստեր և
հանդէսներ կազմակերպել, թափօրով ուխտ
գնալ Օշական, ս. Մեսրոպի գերեզմանին,
պատարագ, հոգեհանգստա կատարել այնտեղ
և հանդիսավոր ակումբ բոլորել. շատ հեշ-
տութեամբ կարելի է այդ օրը զանազան
քաղաքներում տեղական տօներ կազմակեր-
պել, բոլոր եկեղեցիներում հանդիսավոր
ժամերգութիւն կատարել, բոլոր դպրոցնե-
րում տօն և պատշաճ հանդէսներ ու դասա-
խոսութիւններ կազմակերպել և այլն:

Այսպիսի տօնախմբութիւն նոյնքան հեշ-
տութեամբ կարելի է կատարել ինչպէս
հոկտեմբերի 13-ին, նոյնպէս էլ նոյեմբերի
25-ին: Իսկ դպրոցական (կամ գրական)
Փօնդ կազմել, էջմիածնի մատենադարանի
կարեոր ձեռագիրները պարբերաբար հրա-
տարակել և այլն—սրանք չեն կարող իրա-
կանանալ ոչ հոկտեմբերին և ոչ նոյեմբեր-
ին, այլ տարիների են կարօտ: Ապա ու-
րեմն նոյեմբերի 25-ը ժամանակի երկա-
րութեան տեսակէտից ոչ մի շօշափելի,
գործնական առավելութիւն չունի հոկտեմ-
բերի 13-ի համեմատութեամբ:

Գալով նոյեմբերի 25—26-ի «օրվայ պատ-
շաճութեան», որի «առաջ տեղի էր տվել»
Թիֆլիսի Յանձնաժողովը, պէտք է խոստո-
վանեմ, որ ներկայ յօրվածը գրել սկսելիս
չպահանձն ժամանակ, տարբակուանքի մէջ

էի, ինձ յայտնի չէր, թէ մը գիտնականն է այդպէս ճիշդ որոշել հայոց զրերի գիւտի տարեղարձի օրը, որին այդպէս պինդ փարել է Թիֆլիսի Յանձնաժողովը, քանի որ դեռ գիւտի տարին ճիշդ որոշված չէ և տատանվում է 404-ի և 416-ի միջևն ես համոզված էի, որ ոչ մի խելքը կլսին դիտնական այդպիսի ճիշդ տարեղարձ չէր կարող որոշել Նախկին հետազոտողների կարծիքները զրերի գիւտի մասին՝ ինձ յայտնի էին. Գալուստ Տէր-Մկրտչեանի յօդվածը կարդացել էի—չը կայ և չէր կարող լինել նըանց մէջ այդպիսի բան։ Մարկվարդի յօդվածը Շանդէս Ամսօրեայում, կարդացել էի նոյնպէս, բոլոր իմ ձեռքիւ եղած համարներում չը կաը այդպիսի բան. իսկ փետրվարի համարը (ինչպէս և ապրիլ-մայիսը) չէր հասցված ինձ։ Մնացել էի տարակուսած, թէ գուցէ հենց այս փետրվարի համարում Մարկվարդը մի նշանավոր, թէպէտ բոլորովին անհավատալի գիւտ է արել Շնորհակալ եմ պ. Գ. Ալթունեանին, որ «Հօրիզոնում» նոյնպէս կասկած յայտնելով նոյեմբ. 25-ի գիտական հիմքի մասսին՝ առիթ տվեց պ. Լէօին բացատրել այդ հիմքը և իմ տարակոյսը փարատելի Դուքս է գալիս, որ նոյեմբ. 26-ը իբրև հայոց գրերի գիւտի տարեղարձ նշանակված է Ալքսանդրովում տպված Ափինեանի օրացոյցում, և բացի այդ՝ «Թիֆլիսի Յանձնաժողովը ձեռքի տակ ունի իին գրչագիր եկեղեցական ազրիւր, որ ճիշդ նոյնն է ասում»։

Եթէ այս «գիւտական» հիմքը մէջ բերվէր «Խաթարալայում» կամ մի անհիդուտի մէջ, բավական սրամիւ կը լինէր բայց եր

բերվում է մի Յանձնաժողովի կողմից իրանլուրջ մօտիվ՝ հոկտ. 13-ին նշանակված համազգային տօնախմբութեան դէմ սեփական, հերձվածողական յօրելեան կազմակերպելու համար—արդէն մարդ կը գաղարի ծիծաղելուց և չի գիտենայ արդահատել արդեօք Յանձնաժողովին նրա տգիտութեան համար, թէ բողոքել նրա աչքակապատութեան դէմ։ Ճիշդ է, հոկտ. 13-ն էլ գիտական հիմք չունի, իբրև զրերի գիւտի արքեղարձ, բայց այդ օրը, ինչպէս ուղիղ նկատել է պ. Ալթունեանը, դարերով սրբագրծված է ազգի և եկեղեցու մէջ իբրև թարգմանիչների տօն, որոնց շարքում առաջին տեղն է դրված ս. Մեսրոպին։ Հայոց բոլոր եկեղեցիները անյիշատակ ժամանակներից ի վեր այդ տօնը կատարում են տօնացոյցի սահմանած օրում, ուստի նա ազգովին ընդունված ու նվիրական է։ Ճիշդ է պ. Լէօի միւս առարկութիւնն էլ, թէ ս. Մեսրոպի՝ իբրև գրերի գիւտի հեղինակի տօնը մեր եկեղեցին տօնում է ս. Սահակի հետ ուրիշ անգամ (այս տարի յունիսի 14-ի). ես էլ համաձայն եմ, որ գրերի գիւտի յօրելեանը ավելի պատշաճ կը լինէր տօնել ս. Սահակի և Մեսրոպի—այդ երկու անբաժան ամօռների—տօնի օրը։ Բայց երբ այդ անկարելի էր ժամանակի կարճ լինելու, դպրոցների այդ ժամանակ փակ լինելու և ինտելիգենսիա հասարակութեան քաղաքներից ցրված լինելու և այլ պատճառներով, ապա ամենապատշաճ օրը մնում է հոկտ. 13-ը, երբ ոչ մի անյարմարութիւն չի լինի յիշել։ Մեսրոպի մեծ ընկերին՝ ս. Սահակին։ Ստ. Մալխասեանց (Վերջը միւս տնդամ)